ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

« 20 » դեկտեմբերի 2024թ

ՈՐՈՇՈՒՄ N 412 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 369-Ա, ԹԻՎ 370-Ա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 378-Ա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 384-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1) ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 20-ի «Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, միացման պայմանագիրը, «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության և «Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռները, «Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 369-Ա, «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, միացման պայմանագիրը, «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության և «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռները, «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին

և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 370-Ա որոշումը, նոյեմբերի 26-ի «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, միացման պայմանագիրը, «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության և «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռները, «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 378-Ա որոշումը, նոյեմբերի 29-ի «Մալիշկա գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, միացման պայմանագիրը, «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության և «Մալիշկա գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռները, «Մալիշկա գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 384-Ա որոշումը, 3-րդ մասի 4-րդ կետը՝ «Միացող ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների՝ Ընդլայնվող ընկերությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 4-ի» շարադրել նոր խմբագրությամբ՝

«Միացող ընկերության աշխատակիցների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ընդունում (տեղափոխում) ազատումը իրականացնել դեկտեմբերի 13-14-ին, միացող ընկերության գույքի և գույքային իրավունքի փոխանցումը «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը իրականացնել դեկտեմբերի 16-17-ին, Ընկերության

պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների փոխանցումը «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը իրականացնել դեկտեմբերի 19-20-ին, համաձայն Հավելված 4-ի»:

2. Որոշման գործողությունը տարածվում է դեկտեմբերի 13-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր